284. *ԽԱՉՔԱՐ, դրված է եղել ս. Աստվածածին եկեղեցու մուտքին որպես բարավոր; վրան՝*

Թիւն ։ՈԳ։ (1241). Ես Ապրել, որդի Ուղտիկա կանգնեցի զխաչս ինձ ու. ամուսին իմոյ. աղաւթեցէք։

*Հրատ. Բարխուդարեանց, 216։*

285. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, դրված է եղել ս. Աստվածածնի սեմին, վրան՝*

Թիւն ։ՉԺԸ։ (1269). այս է հանգիստ . . . . . .

*Հրատ. Բարխուդարեանց, 216։*

ՀԻՆ ՄՈԽՐԱԹԱՂ ԳՅՈՒՂԱՏԵՂ

286. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, խրված է հողի մեջ, գտնվում է անապատի արևմտյան մուտքի մոտ, երեսին 3 տող.*

ԱՅՍԷՏԱՊԱՆ
ՂԱԶԱՐԻՆ Թ
ՌՃԺԱ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ| ՂԱԶԱՐԻՆ. ԹՎ.։ՌՃԺԱ։ (1662)

287. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդի մոտ, երեսին 4 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏ ԽՕՃԱՅ
ԵՎՐԻՆԹՎՌ
ՃԿԹ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԽՕՃԱՅ| ԵՎՐԻՆ. ԹՎ.։Ռ|ՃԿԹ։ (1720)։

ՄԵԼԻՔ ԻՍՐԱՅԵԼՅԱՆՆԵՐԻ ԱՊԱՐԱՆՔԻ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՂԱԾ ԵՆ

288. *ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՉՈՐՐՈՐԴ ՍԵՆՅԱԿԻ ՎՐԱ՝*

Ողորմութեամբն ամենազօրին Աստուծոյ. բազում ժամանակ է յայժ տանեալի շինեալ զտունս, իսկ Բարերարին Աստուծոյ տուաւ ինձ կարողութիւն և զօրութիւն Սուրբ Հոգւոյն՝ հանգուցեալ Մելիք Իսրայէլի որդի ես Մէլիք Յաղամս շինեցի զգեղեցիկ կամարս և գեղեցկանկար տունս Սարայիս բազմահանճար զարդեակն իմ Մէժլումին . . . ծ. Աստուծոյ, աստուածայնով բարեաւ վայելեսցէ հանդերձ մեօք։ՌՄԻ։ (1771)։

*Հրատ. Բարխուդարեանց, 218։*

289. *ՀԻՆԳԵՐՈՐԴ սենյակի վրա՝*

Տեսէ՛ք, մեր հաւատոյ հայրն Աբրահամ, կյանք նորա է . . . ամ. նայ ոչ շինեաց տուն և տեղի և բակ . . . վրանօք շրջէր յերկրին ի խառանն . . . այլ սոյն կեանք մեր կարճացեալ թիւ ։Ծ։ (50), ամ համայն բոլոր երթալոց եմք մեք։ միւս անգամ. տեսէք ի մեր յիմարութիւնս, որ այժմուս զայ, չենք . . . ազիմա նման ամօք Աբրահամայ թվ. ։Ռ . . . ։

*Հրատ. Բարխուդարեանց, 218։*

## 17. ՋԱՆՅԱԹԱՂ ԳՅՈՒՂ

*Ս. Գևորգ եկեղեցին քանդել են. մնում է հյուսիսային պատի մի մասը, որի ստորին մասերում ագուցված կան հին տապանաքարեր և մի կոթողանման քար, վրան խաղողի ողկույզներ, մուտքի բարավորի վրա եղել է՝*

290. Թ.։ՌԾԸ։ (1609). յիշատակ է Ղուկասի որդի Գրիգորի։

*Հրատ. Բարխուդարեանց, 214։*